ժամանակաւ երիս ամաւ, զի Օրինագէտ Միքայէլ գինունիդ նստցես 'ի յաթոռ պետ դատաւորի և ընդ խորհրդակցօք դատաւորօք դատեսցես 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ բնակեալ 'ի վիճակս քաղաքին յերեւանու, ըստ Օրինօքն հայաստանեաց տուաք հրաման քեզ զի ընդունեսցես խորհրդակից քեզ և եղբայրակից դատաւոր 'ի պաշտօն խորհրդակցութեան ութն արանց բարեաց Օրինագիտաց 'ի սեպհական ազգէն հայոց և 'ի միջէ բնակօղաց 'ի վիճակս քաղաքին երեւանու, և 'ի ընտրօղութենէ և նամակ պաշտօնէիւք ձեռնադրեալ 'ի խոհեմազարդ զինուորական իշխանէն և խորհրդակցէ իւրմէ յերևանու, դատել ժողովուրդս ժամանակաւ երիս ամաւ, տուաք իշխանութիւն քեզ զի տացես իշխանութիւն պաշտօնի առ դպիրս և գծագիրս կալ 'ի պաշտօնս դպրութեան և գծագրութեան առաջի ատենի դատաստանի յերևանու, վեց դպրիս և երեք գծագիրս, ամենեքեան սեպհական ազգէն հաւատացեալ 'ի Քրիստոս ըստ Օրինօք հայաստանեաց տուաք իշխանութիւն քեզ ունիլ կամս երկուս 'ի ժամանակի վճռոյ և 'ի կարգադրութենէ Օրինացն հայոց, փակեցաք ակն և ձեռն քոյ զի մի հայեսցես երեսս և արժանաւորութիւնս գանգատողի և դատախազի, և մի ընդունեսցի ձեռն քոյ կաշառս 'ի վերայ իրաւանց, կալով մնասցես 'ի աթոռ դատաստանի դատել քաղցրութեամբ ժո-